



Ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների կանխարգելումը

Ջուրն ամենաարժեքավոր բնական ռեսուրսն է: Այն զբաղեցնում է Երկրի մակերևույթի 2/3 մասը, և ջրի առատության շնորհիվ է, որ մեր մոլորակը կոչվում է նաև «կապույտ մոլորակ»:



Սևանա լիճ

Ջուրն օգտագործվում է գյուղատնտեսությունում, արդյունաբերությունում և կենցաղային տարբեր նպատակներով: Չնայած երկրագնդի վրա ջրի առատությանը, դրա մեծ մասը բաժին է ընկնում օվկիանոսներին ու ծովերին, և ջրի ընդհանուր քանակի միայն 1 %-ն է պիտանի խմելու համար:

Հայաստանում ջրամատակարարման 95,5%-ն ապահովվում է ստորերկրյա աղբյուրների, իսկ մնացած մասը՝ մակերևութային ջրերի միջոցով: Ստորերկրյա աղբյուրների ջրի որակը հիմնականում համապատասխանում է խմելու ջրի նորմատիվային պահանջներին:

Այսօր աշխարհի բնակչության համար ջրի աղտոտումը բավականին լուրջ խնդիր է: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, ամեն տարի ջրի հետ կապված հիվանդությունների պատճառով մահանում է ավելի քան 3,4 մլն մարդ:

Ջրի աղտոտման ուղիները

Ջուրը կարող է աղտոտվել ոչ կենտրոնացված ջրամատակարարման աղբյուրների (ջրհոր, գետի ջուր, բաց ջրամբար) ոչ բավարար վարակազերծման պատճառով: Բաց ջրամբարների ջուրը կարող է աղտոտվել տնտեսա-կենցաղային և արդյունաբերական կոյուղու կազմակերպված արտահոսքերով, իսկ գյուղական վայրերում՝ նաև աղբանոցներից, բակային հորատիպ գուգարանների կեղտաջրերից, գոմերից և հավաքներից գոյացած անկազմակերպ արտահոսքերով:

Աղտոտման պատճառներից կարող է լինել նաև բաց ջրամբարը որպես անասունների ջրելատեղ օգտագործելը: Բաց ջրամբարների և ստորերկրյա ջրերի, հատկապես գրունտային ջրերի աղտոտումը հնարավոր է նաև անձրևաջրերի և ձնհալի ջրերի միջոցով:

Հողի մակերեսի աղտոտվածությունը կարող է հանգեցնել ստորգետնյա ջրերի աղտոտման, հատկապես՝ այն վայրերում, ուր բարձր է գրունտային ջրերի մակարդակը:

Ջրի աղտոտման պատճառ կարող են դառնալ ջրի այն աղբյուրները, որոնք չունեն սանիտարական պաշտպանական գոտի և պատշաճ ձևով չեն շահագործվում:

Կենտրոնացված ջրամատակարարման դեպքում ջրի աղտոտումը տեղի է ունենում ջրամատակարարման ցանցի ոչ ճիշտ շահագործման կամ ցանցում առաջացած պատահարների պատճառով, որոնց ժամանակ կոյուղաջրերը կամ միջավայրի աղտոտված ջրերը կարող են ներթափանցել

խմելու ջրագծեր և առաջացնել տարբեր աղիքային հիվանդությունների խոշոր բռնկումներ: Աղտոտված ջրի միջոցով փոխանցվում են տարբեր վարակիչ հիվանդություններ, որոնցից հատկապես վտանգավոր են աղիքային հիվանդությունները (խոլերա, որովայնային տիֆ, պարատիֆեր, դիզենտերիա և այլն): Ջրային ծագման հիվանդություններից են նաև լեպտոսպիրոզը, մալարիան, զանազան հելմինթոզները, ինչպես նաև սիֆիլիսի խոցը, տուլարեմիան, տուբերկուլոզը և այլն:



Արարատի մարզի Դիտակ գյուղի խմելու ջրագիծը

Բնական-օջախային հիվանդությունների տարածման մեջ մեծ դեր են խաղում կրծողները, որոնք ամռանը վխտում են բաց ջրամբարների ավերին: Մարդիկ, անտեղյակ լինելով ջրի հնարավոր աղտոտվածությունից, զովանում են ջրամբարներում և կարող են վտանգել իրենց առողջությունը:

Աղիքային սուր վարակների հարուցիչները և դրանց տոքսինները (թույները) ախտահարում են մարդու ոչ միայն աղեստամոքսային, այլև կենտրոնական նյարդային համակարգը: Հիվանդի մոտ կարող է նկատվել բարձր ջերմություն, սիրտ-անոթային համակարգի աշխատանքի արագացում, լյարդի, փայծաղի և այլ ներքին օրգանների ախտահարում, ցավեր որովայնի շրջանում, փսխում, հաճախակի և ջրիկ կղանք:

Հիվանդության առաջին իսկ ախտանշանների ի հայտ գալուն պես, անհապաղ հարկավոր է դիմել բժշկի օգնությանը և խուսափել ինքնաբուժումից:

Ջրով փոխանցվող հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումներ

- Պահպանել անձնական հիգիենայի կանոնները
- Խնամքով և հնարավորինս հաճախ օձառով լվանալ ձեռքերը, հատկապես՝ ուտելուց առաջ և զուգարանից օգտվելուց հետո
- Խմելու համար ծորակից ջուր վերցնել 10-15 րոպե հոսելուց հետո, քանի որ առաջին րոպեներին ջուրը կարող է աղտոտված լինել
- Հետևել սննդի պահպանման և պատրաստման կանոններին
- Սննդի պատրաստման և կենցաղային կարիքների բավարարման համար, օգտագործել ջրի ստուգված աղբյուրներից վերցված ջուրը
- Ջուր չխմել պատահական աղբյուրից
- Քաղաքից դուրս մեկնելիս՝ վերցնել ջրի բավարար պաշար
- Խուսափել աղտոտված ջրամբարներում լողալուց, փոխարենը՝ լողալ միայն այդ նպատակի համար հատկացված վայրերում
- Աղիքային հիվանդությունների բռնկումների ժամանակ, ջուրն օգտագործել միայն եռացնելուց հետո

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ի կողմից <<Դիտակ համայնքի բնակչությունը՝ հանուն անվտանգ խմելու ջրի կորստի կանխման>> ծրագրի շրջանակում՝ Կոկա-Կոլա ընկերության աջակցությամբ՝ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի <<Ջրի ամեն մի կաթիլն արժեք ունի>> ծրագրի շրջանակում: